

## Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2016 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2016 թվականին մարզպետի կողմից ընդունվել են 69 որոշումներ, 161 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 201 հրամաններ. հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստեր:

2016 թվականին աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 6545 և ելք են արվել 8485 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

2016 թվականին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմերում իրականացվեցին 12 գլխավոր և 9 առաջատար և կրկուսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների արեստիպումներ:

Մարզպետարանի աշխատակազմում 2016թ դեկտեմբերի 30-ի դրությամբ թափուր է աշխատակազմի առողջապահության և սոցալ վարչության առողջապահության բաժնի պետի գլխավոր պաշտոնը , ժամանակավոր թափուր է աշխատակազմի ընտանիքի հիմնահարցերի բաժնի առաջատար պաշտոնի հաստիքը:

Սահմանված կարգով իրականացվեցին աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքները, ըստ որի գրաֆիկով նախատեսված փարբեր ժամանակահատվածներում երշաբաթվա մասնագիտական վերապատրաստում են անցան աշխատակազմի թվով 22 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2016 թվականին մարզպետի մոտ կատարվել է 1900 քաղաքացիների ընդունելություն:

Տարվա ընթացքում ստացվել և ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմից ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 30

դիմումներ, որից՝ 5-ը ստացվել են Ջերմուկի, 11-ը Վայքի, 14-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2016 թվականին 1516 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 63 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր, իսկ 36-ը պեղատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

**2016թ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 1900 քաղաքացիներ, որից՝**

1. Դրամական օգնություն	1516
2. Նպաստի հարցերով	11
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	25
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	27
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	31
6. Աշխատանքի տեղավորման	30
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	6
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	63
9. Պետ.պատվերով բուժօգնություն	36
10. Որդեգրման/երեխային մանկատնից վերադարձնելու/ և ներառական կրթության մեջ ընդգրկելու հարցերով	76
11. Կրթության և ՆՈՒՀ-երի հարցերով	25
12. Այլ հարցերով	54

Աշխատակազմի քարտուղարության պետ՝



Հ. Կարապետյան